


ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների և հատուցման կառուցակարգերի վերաբերյալ*



Օրերս լույս է տեսել Հայոց ցեղասպանության պատմության և Հայոց պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար նախատեսված «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» («Տիր» հրատարակչություն, 2019, 608 էջ) ծավալուն ուսումնասիրությունը:

Այս կոլեկտիվ աշխատությունը 2015 թ. հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ընդունումից հետո ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ ստեղծված հետազոտական

խմբի՝ 2016-2018 թթ. ընթացքում իրականացրած գիտական ծրագրի արդյունքն է: Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը, իսկ նրա տպագրությունը հովանավորել է ԳԱԱ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

Ուսումնասիրության յոթ բաժիններում լուսաբանված են Հայոց ցեղասպանության քաղաքական, տնտեսական ու ժողովրդագրական հետևանքները, հստակեցված են մարդկային կենսագործունեության տարբեր բնագավառներում հայության

* Ընդունվել է տպագրության 02.09.2019:

ՎԷՐ ՀԱՄԱՆԻՍՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԻՅԱՆ ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՆՏՈՒՅՑԻ, 2019

ունեցած կորուստների չափերը, ուրվագծված են ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղիները:

Մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը** հանգամանալիորեն ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ու հատուցման հիմնահարցը թե՛ պատմագիտական, թե՛ միջազգային-իրավական և թե՛ քաղաքագիտական հարթություններում: Չթերագնահատելով Հայոց ցեղասպանության մասին վերջին կես դարի ընթացքում աշխարհի տարբեր պետությունների կողմից ընդունված հայտարարությունների, հռչակագրերի, բանաձևերի, որոշումների և օրենքների նշանակությունը՝ պատմաբանը միաժամանակ ընդգծում է, որ դրանք դեռևս իրավական լուրջ կովաններ չեն հանցագործության հետևանքների վերացման, մասնավորապես՝ հատուցման խնդիրն առաջ մղելու համար: Հարցն այն է, որ այդ պաշտոնական փաստաթղթերից միայն 1982 թ. ապրիլի 29-ին Կիպրոսի խորհրդարանի ներկայացուցիչների պալատի, մասամբ նաև՝ 1987 թ. հունիսի 18-ին Եվրամիության ընդունած բանաձևերում, ինչպես նաև՝ 1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական դոմայի և 2004 թ. նոյեմբերի 30-ին Սլովակիայի խորհրդարանի ընդունած որոշումներում է հստակ մատնանշված հայ ժողովրդի՝ իր հայրենիքի տարածքում Արևմտյան Հայաստանում ցեղասպանության ենթարկված ու հայրենագրված լինելու իրողությունը: Մինչդեռ Հայոց ցեղասպանության աշխարհագրական արեալի անտեսումն այդ հանցագործությունը ճանաչած մյուս պետությունների կողմից ոչ այլ ինչ է, քան տարածքային հատուցման հարցում միջազգային պատասխանատվությունից խուսափելու, 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված դաշնագրից հրաժարվելու փորձ: Ա. Մելքոնյանի համոզմամբ, Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի մարտավարությունը պետք է լինի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից շուտափույթ անցումը նյութական և հողային հատուցման պահանջին՝ խնդիրը միջազգային դատարանում վիճարկելու եղանակով՝ հիմք ընդունելով 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրն ու նոյեմբերի 22-ի ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը:

Քննության ենթարկելով Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման հիմնահարցին վերաբերող միջազգային-իրավական հիմնարար փաստաթղթերը՝ Ա. Մելքոնյանը վերհանել է դրանցում հայ ժողովրդի և Հայաստանի համար անբարենպաստ դրույթների վերանայման հնարավոր կառուցակարգերը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է համարվում ՄԱԿ-ի օրենսդրության հարստացումը **հայրենագրված պատրիոցիդ** հասկացությամբ և Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ենթարկված ժողովուրդների՝ հայերի, հույների և ասորիների նախաձեռնությամբ հատուկ բանաձևի ընդունումը, ինչն իրավական ճանապարհի կհարթի դատական կարգով հատուցման հասնելու համար:

Այս կոլեկտիվ աշխատության մյուս հեղինակները՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գևորգ Պողոսյանը** և պ. գ. թ. **Գեղամ Բադալյանը** կատարել են հայ ժողովրդի կրած մարդկային կորուստների և ցեղասպանության ժողովրդագրական հետևանքների ուսումնասիրությունը: Ճշտվել է 1914 թ. դրությամբ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայության թվաքանակը, ինչի շնորհիվ հնարավոր է հաշվար-

կել Հայոց ցեղասպանությունից մեկ դար անց հայ բնակչության հնարավոր թիվը՝ հաշվի առնելով բնական աճի գործոնը: Թուրքական վիճակագրության, արևմտյան փորձագետների և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համադրության արդյունքում ստացվում է, որ 1914-1918 թթ. համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրությունում՝ ներառյալ Էրզրումի, Վանի, Դիարբեքի, Սեբաստիայի, Խարբերդի, Բիթլիսի, Տրապիզոնի նահանգները, Ասիական Թուրքիան, Կիլիկիան, Հյուսիսային Սիրիան և կայսրության եվրոպական մասը, հայերի թվաքանակը կազմել է 1,6-ից մինչև 2 միլիոն մարդ: Սակայն հաշվի առնելով քաղաքական նկատառումներով հայերի թվաքանակն արհեստականորեն նվազեցնելով՝ թուրքական իշխանությունների ու վիճակագրության միտումները, նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հաշվարկներում առկա թերությունները՝ Գ. Պողոսյանը և Գ. Բադալյանը կարծում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը պետք է կազմեր 2,5-3 միլիոն: Ժողովրդագրական տեղաշարժերի մանրակրկիտ վերլուծության և դրանց վերաբերյալ տվյալների համադրման արդյունքում հետազոտողները եզրակացնում են, որ, եթե չլինեին մեր ժողովրդի կորուստները 1914-1918 և 1939-1945 թթ. համաշխարհային պատերազմներում, ինչպես նաև 1988 թ. սկսված ու շարունակվող Արցախյան հակամարտության և 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով, ապա մեր տարածաշրջանում ապրող հայերի ընդհանուր թիվը կարող էր հասնել առնվազն 16 կամ նույնիսկ 20 միլիոնի: Սակայն այսօր տարածաշրջանում միայն 4 միլիոն հայ է բնակվում:

«ԳԱԱ թղթակից անդամ **Արարատ Աղասյանը** ներկայացրել է հայ միջնադարյան ճարտարապետական կոթողների, հայկական վանքերում ու եկեղեցիներում պահվող ձեռագիր պատկերազարդ մատյանների, որմնանկարների, սրբանկարների, բարձրաքանդակների, խաչքարերի ու տապանաքարերի, կիրառական արվեստի արժեքների, արևմտահայ աշխարհիկ կերպարվեստի անդառնալի կորուստներն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում՝ համիդյան ջարդերի ու Մեծ եղեռնի հետևանքով, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականության շարունակումը Թուրքիայի Հանրապետությունում:

ճարտարապետության դոկտոր **Դավիթ Քերթմենջյանն** ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացման քաղաքականությունը՝ դրա հետևանքների և մշակութային եղեռնի դիմաց հատուցման խնդիրների դիտանկյունից: Հիմք ընդունելով XX դարի ընթացքում Արևմտյան Հայաստանում կատարված դաշտային դիտումների արդյունքում պատմաճարտարապետական հուշարձանների վերաբերյալ հավաքված փաստագրական՝ գծագրական, չափագրական, լուսանկարչական նյութը՝ հետազոտողը նշում է, որ 1914 թ. դրությամբ հոգևոր կառույցների ընդհանուր թիվն Արևմտյան Հայաստանում թերի ամբողջությամբ պետք է ընդունել 506 վանք և 2228 մեծ ու փոքր եկեղեցի, իսկ Կիլիկիայում՝ 100 վանք: Ի դեպ, այդ տվյալները հիմք են ընդունվում նաև հայկական ճարտարապետա-

կան լքված գույքի նյութական արժեքի գնահատման համար: Հետազոտվել են նաև մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ Թուրքիայի Հանրապետության կողմից ստորագրված ու վավերացված միջազգային կոնվենցիաները՝ նշելով թուրքական պետության կողմից այդ փաստաթղթերի բազմաթիվ խախտումները և դրանցից բխող պատասխանատվությունը: Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական լքված գույքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու նպատակով Դ. Քերթմենջյանն առաջարկում է կազմել հայկական լքված հարստության, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի լքված ճարտարապետական գույքի պահպանության ենթակա հուշարձանների ցուցակները՝ դրանք համաձայնեցնելով միջազգային մարմինների և թուրքական կառավարության հետ: Նաև առաջարկվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ստեղծել մասնագիտացված կենտրոն՝ համակարգելու Արևմտյան Հայաստանի ուսումնասիրված և դաշտային զննման ենթարկված բնակավայրերի ու հուշարձանների տվյալները: Հայկական լքված գույքի պահանջատիրության հարցում կարևոր են նաև հայ-թուրքական հարաբերությունները ժամանակակից ճարտարապետության կրիտիկական ռեգիոնալիզմի առաջադեմ սկզբունքի հիման վրա կառուցելու, գույքի արժեքավորումը ճարտարապետաշինարարական էկոնոմիկայի մասնագիտական գնահատման առարկայական սկզբունքներով կատարելու, ցուցակագրված և միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ համաձայնեցված հուշարձանները միջազգային կոնվենցիաներով ղեկավարվող ճարտարապետական պահպանության ենթարկելու և այլ հիմնախնդիրները:

Կոլեկտիվ աշխատության շրջանակներում պ. գ. դ. **Արմեն Մարուքյանը** ներկայացրել է ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած գույքային և ֆինանսական կորուստներն ու դրանց հետևանքները: Նա նաև դասակարգել և համակարգված ներկայացրել է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման կառուցակարգերի ու գործիքակազմի վերաբերյալ գործնական առաջարկների բաժինը: Պատմաբանի համոզմամբ, 1919 թ. փետրվարի 26-ին Փարիզի Խաղաղության վեհաժողովի Տասի խորհրդին Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի և Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի ներկայացրած հայկական տարածքային պահանջների վերաբերյալ հուշագրով Հայոց ցեղասպանությունն իրագործած Օսմանյան կայսրությանը ներկայացվեց հայ ժողովրդի խախտված գույքային իրավունքների վերականգնման ու հատուցման պահանջ: Սակայն փաստաթղթում առկա են ցեղասպանության զոհ դարձած հայ բնակչության թվաքանակի, այդ ոճրագործության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասների վերաբերյալ մեկնարկային թվերի անճշտություններ և մեթոդաբանական բնույթի սխալներ, որոնց հետևանքով թերի են ներկայացված վնասների ծավալները: Հուշագրում նյութական վնասների վերաբերյալ հաշվարկների կառուցվածքը հիմք ընդունելով և նրանում առկա տվյալներն ամբողջացնելու նպատակով՝ Ա. Մարուքյանը կազմել է Մեծ եղեռնի ընթացքում հայերի նյութական կորուստների ընդ-

հանուր պատկերն արտահայտող նոր աղյուսակ, որը գետեղված է կոլեկտիվ աշխատության «Հավելվածներ» բաժնում: Հայերի ունեցվածքին վերաբերող տարբեր սկզբնաղբյուրներից հավաքագրված և համակարգված տեղեկությունները մուտքագրված են նշված աղյուսակի համապատասխան բաժիններում ու հնարավորինս ամբողջացնում են Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական կորուստների վերաբերյալ կոլեկտիվ աշխատության համահեղինակների շարադրանքը: Դրանցում ներկայացված են Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքրի և Սեբաստիայի նահանգների, Տրապիզոնի նահանգի և Պարսկահայքի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառների որոշ բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքը և կրած նյութական կորուստներն՝ ըստ Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում պահվող ականատես վերապորոշների վկայությունների: Հավաքագրված նյութերից առանձնացվել են ուշագրավ տեղեկություններ նշված նահանգների քաղաքներում և գյուղերում հայերին պատկանած անշարժ ու շարժական գույքի, արդյունաբերական ձեռնարկությունների, հանքավայրերի, արհեստագործական կազմակերպությունների, բանկային հաշիվների, առձեռն և այլ դրամական միջոցների, նաև համայնքային ունեցվածքի, մասնավորապես՝ դպրոցների, ակումբների, կրոնական և այլ շինությունների վերաբերյալ:

Կոլեկտիվ աշխատության շրջանակում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման կառուցակարգերի ու գործիքակազմի վերաբերյալ Ա. Մարուքյանի ներկայացրած առաջարկները կարելի է գնահատել որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր «ճանապարհային քարտեզի» ուրվագիծ: Պատմաբանի համոզմամբ, ներկայումս Թուրքիայի ներսում և նրա շուրջ ծավալվող քաղաքական զարգացումները հույս են ներշնչում, որ Հայոց ցեղասպանության ժխտման հետևողական քաղաքականություն իրականացնող և այդ ոճրագործության հետևանքների հաղթահարման հարցի քննարկումը բացառող թուրքական իշխանությունները միայն արտաքին ու ներքին ճնշումների պայմաններում հարկադրված կլինեն անդրադառնալ հատուցման խնդրին: Ուստի առաջարկվում է 1952 թ. սեպտեմբերի 10-ի Լյուքսեմբուրգի համաձայնագրի սկզբունքով Հայաստանի Հանրապետության ու Սփյուռքի կառույցների անունից նախապատրաստել Թուրքիայի Հանրապետության հետ ստորագրելու համար նախատեսված՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մասին համաձայնագիր՝ դրան կցելով հատուցման գործընթացի ճանապարհային քարտեզը՝ հստակեցնելով նախ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, ապա նաև հասցված նյութական վնասների վերականգնման կամ դրանց դիմաց հատուցման, ցեղասպանության հոգևոր-մշակութային հետևանքների հաղթահարման և վերջապես՝ բռնազավթված հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքի վերականգնման փուլային լուծումները:

Նույն հիմնահարցի շրջանակներում երկրաբան **Հայկ Մելիք-Աղամյանն** ուսումնասիրել է Հայոց ցեղասպանության իրագործմամբ Արևմտյան Հայաստանի հանքահումքային ռեսուրսների շահագործումից տեղաբնիկ հայ ժողովրդին

գրկելու և դրա հետևանքների հարցերը, գնահատել այդ ռեսուրսների արդյունահանման տնտեսական արդյունավետության աստիճանը: Հետազոտողի պնդմամբ, Արևմտյան Հայաստանի բոլոր տիպի օգտակար կանխատեսումային ռեսուրսների հանրագումարը 2017-2019 թթ. գներով կազմում է նվազագույնը 660 մլրդ դոլար, իսկ առանձին վերցրած Վիլսոնյան Հայաստանինը՝ 600 մլրդ դոլար: Հայոց ցեղասպանության իրագործումից մինչև մեր օրերը Թուրքիան, նույնիսկ ոչ լիարժեք և թերի տվյալներով, ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքից արդյունահանել է 16-17 մլրդ դոլար արժողությամբ օգտակար հանածոներ, իսկ միայն Վիլսոնյան Հայաստանի տարածքից՝ 5 մլրդ դոլարի: Հայկ Մեյք-Ադամյանի ուսումնասիրության գլխավոր եզրահանգումն այն է, որ Արևմտյան Հայաստանում և առանձին վերցրած Վիլսոնյան Հայաստանի տարածքում դեռևս կան համապատասխանաբար նվազագույնը 310 և 227 մլրդ դոլարի հաստատված պաշարներով օգտակար հանածոներ, որոնց հանքավայրերի երկարատև շահագործումից կարելի է ակնկալել համապատասխանաբար 25 և 18 մլրդ դոլարի շահույթ:

Արևելագետ **Անուշ Հովհաննիսյան** ուսումնասիրել է հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում և դրա շարունակումը Թուրքիայի Հանրապետության կողմից: Նրա դիտարկմամբ, օսմանյան ժամանակաշրջանում թուրքերն իրենք իսկ անուղղակի կերպով նպաստել են հայերի տնտեսական հզորացմանը, քանի որ արհամարհելով տնտեսական գործունեության ոլորտը՝ առևտրի և արհեստի ասպարեզները թողել էին իրենց ոչ թուրք հպատակներին: Պատահական չէ, որ հայերի ունեզրկումը նոր թափով շարունակվեց թուրքերի երազած Մեծ Թուրանի ճանապարհին վտանգ ներկայացնող հայությանը և Հայկական հարցը վերացնելուն ուղղված ցեղասպանության ընթացքում՝ որպես դրա առանձին գործողություն: Համադրելով հայերի ունեզրկման գործընթացը միապետական և հանրապետական վարչակարգերի օրոք՝ Ա. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ այդ քաղաքականությունը եղել է շարունակական. եթե Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում ավարտվել է հայերի ունեցվածքի բռնագրավումը, ապա Թուրքիայի Հանրապետության ժամանակաշրջանում ավարտվել է դրա յուրացումը: Ներկայիս թուրքական իշխանությունները ևս վարում են Թուրքիայի ազգային փոքրամասնություններին հալածելու, վտարելու և ունեզրկելու քաղաքականություն, որի համար քաղաքական ու քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով էլ թուրքական կառավարությունը հետևողական է Հայոց ցեղասպանության ժխտողականության հարցում: Այդուհանդերձ, Ա. Հովհաննիսյանի համոզմամբ, Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգները հնարավորություն կարող են ստանալ հատուցման պահանջ ներկայացնելու, քանի որ լքյալ գույքի առնչությամբ օսմանյան և հանրապետական ժամանակաշրջանի օրենքներում շեշտված է դրանց նկատմամբ սեփականության և կամ դրա դիմաց հատուցում ստանալու հայերի իրավունքը:

Իրավաբան **Վլադիմիր Վարդանյանը** ներկայացրել է Հայոց ցեղասպանության համար թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության

ենթարկելու և ցեղասպանության հանցագործության հետևանքների հաղթահարման միջազգային-իրավական հնարավորությունները: Նրա դիտարկմամբ, Հայոց ցեղասպանությունից մեզ բաժանող ժամանակի գործոնը և այդ ոճրագործության հարցում թուրքական վարչակարգերի վարած ժխտողական քաղաքականությունը բացասական ազդեցություն են ունեցել ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ իրավական լիարժեք պահանջներ ներկայացնելու հնարավորությունների վրա: Այդուհանդերձ, կարևորելով հատուցման պահանջին գործնական ընթացք տալու խնդիրը՝ իրավաբանն առաջարկում է նախևառաջ հստակ տարբերակել բուն ցեղասպանության հանցագործության հետևանքով առաջացած անմիջական կամ ուղղակի վնասները և միջնորդավորված կամ անուղղակի կորուստները: Այնուհետև վերլուծելով դրանց հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցները և հատուցման ձևերն ու եղանակները՝ Վ. Վարդանյանն առաջարկում է ձեռնարկել հետևյալ քայլերը:

- Միջազգային իրավունքի, միջազգային և ներպետական դատավարական ընթացակարգերի հեղինակավոր փորձագետների, փորձառու իրավաբանների ջանքերով ստեղծել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը վերաբերող և Հայոց պահանջատիրությունը հիմնավորող իրավական փաթեթ՝ դրանում ներառելով Ցեղասպանության իրողության հիմնավորումները, դրա հետևանքների ու վնասների ամփոփումը, ցեղասպանության դատապարտման և դրա հետևանքով առաջացած վնասների հատուցման միջազգային իրավական գործիքակազմերի կիրառման հիմնավորումները, ինչպես նաև ստեղծել արխիվային և վավերագրական նյութերի, Թուրքիայում հայերի գույքին առնչվող փաստաթղթերի, ցեղասպանության հետևանքով կրած վնասի հատուցման պահանջով դատարան դիմած հայցվորների, ցեղասպանության զոհերի, վերապրածների ժառանգների, նրանց հասցված վնասների վերաբերյալ կենտրոնացված թվայնացված բազա:

- Խրախուսել ցեղասպանության զոհերի և վերապրածների ժառանգների կողմից դատական կարգով դրամական ու բարոյական հատուցում ստանալու նպատակով ապահովագրական, բանկային և այլ ընկերությունների դեմ հայցերի ներկայացման ու դատական որոշումների ընդունման գործընթացները:

- Աշխատել Հայոց ցեղասպանությունը հաստատող և դատապարտող դատական ակտերի վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման, տարբեր երկրներում այդ ոճրագործությանն առնչվող արխիվները հանրամատչելի դարձնելու, Թուրքիայի նկատմամբ ազդեցիկ պետությունների արտաքին ճնշումը մեծացնելու, միջազգային ասպարեզում ցեղասպանության և մարդկայնության դեմ գործված հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային գործիքակազմերի ձևավորման ու կիրառման, թուրքական ժխտողականությանը համակողմանի հակահարված հասցնելու, Թուրքիայում և այլ երկրներում բնակվող իսլամացած հայերի ինքնության վերականգնման նպատակով իրավական միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

Այսպիսով, «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» կոլեկտիվ աշխատությունն ունի գիտական և գործնական կարևոր նշանակություն. այն ոչ միայն արտացոլում է Հայոց ցեղասպանության ուսումնասիրման ուղղությամբ հայագիտության ոլորտում կուտակված գիտելիքները, այլև կարող է մեծապես օժանդակել դրա հետևանքների հաղթահարման համահայկական օրակարգի մշակմանը:

Լիլիթ Հր. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

Summary

NOTABLE WORK

On the Losses of Armenian People as the Result of the Genocide and the Methodological Grounds of Compensation Structure

Lilit Hr. Hovhannisyanyan
Candidate of Historical Sciences

Key words – losses, structure of compensation, process of international recognition of the Armenian Genocide, architectural monuments, property and financial losses, mineral resources, pan-Armenian agenda.

Recently an extensive work entitled ‘The Losses of Armenian People in the Result of the Genocide and the Methodological Grounds of Compensation Structure’ intended for the wide framework of people interested in the problems of the history of Armenian Genocide and Armenian claims, students and readers has been published. In its seven sections the political, economic and demographic consequences of Armenian Genocide are elucidated, the sizes of losses of the Armenian people in various fields of human activities are clarified, the ways of overcoming the consequences of the Genocide are outlined.

In particular, NAS RA Academician **Ashot Melkonyan** has thoroughly studied the process of international recognition of the Armenian Genocide and the issue of compensation in both historical, international-legal, as well as, political science dimensions.

The other authors of the collective work – NAS RA Academician **Gevorg Poghosyan** and Candidate of Sciences in History **Gegham Badalyan**, have carried out the study of the human losses of Armenian people in the result of the Genocide and its demographic consequences.

NAS RA Corresponding member **Ararat Aghasyan** has presented the irrecoverable losses of Armenian medieval architectural monuments, handwritten illustrated manuscripts kept in Armenian monasteries and churches, frescos, icons, bas-relief, khachkars and gravestones, values of applied art and secular fine arts in Western Armenia and the other territories of the Ottoman Empire in the result of Hamidian massacres and Mets Yeghern, as well as, the continuing policy of the destruction of Armenian cultural heritage in the Republic of Turkey.

Doctor of Sciences in Architecture **Davit Qertmenjyan** has studied the policy of the destruction of Armenian historical-architectural monuments during the Armenian Genocide and its consequences from the perspective of compensation issues for cultural genocide.

In the framework of the collective work Doctor of Sciences in History **Armen Maruqyan** has presented property and financial losses of Armenian people because of the Genocide and its consequences. He has also classified and systematized the section referring to practical suggestions of mechanisms and tools for overcoming the consequences of the Armenian Genocide.

Geologist **Hayk Melik-Adamyanyan** has studied the questions of depriving the indigenous Armenian people of exploitation of the mineral resources through the implementation of the Armenian Genocide in Western Armenia and its consequences, evaluated the degree of economic effectiveness of extraction of those resources.

Orientalist **Anush Hovhannisyan** has studied the process of deprivation of Armenians in the Ottoman Empire and its continuation by the Republic of Turkey revealing its negative effect on the Armenians who remained in the territory of Turkey.

Lawyer **Vladimir Vardanyan** has presented the international-legal possibilities of bringing the Turkish state to political responsibility for the Armenian Genocide and overcoming the consequences of the crime.

Thus, the collective work 'The Losses of Armenian People in the Result of the Genocide and the Methodological Grounds of Compensation Structure' not only reflects the accumulated knowledge on the Armenian Genocide in the field of Armenology, but also can greatly contribute to designing pan-Armenian agenda for overcoming its consequences.

ПРИМЕЧАТЕЛЬНЫЙ ТРУД

О потерях армянского народа вследствие геноцида и методологических основах механизмов компенсации

Лилит Гр. Оганнисян
Кандидат исторических наук

Ключевые слова – потери, механизмы компенсации, международный процесс признания Геноцида армян, архитектурные памятники, имущественные и финансовые потери, минерально-сырьевые ресурсы, всearмянская повестка.

На днях вышло в свет объемное исследование «Потери армянского народа вследствие геноцида и методологические основы механизмов компенсации», предназначенное для интересующихся вопросами истории Геноцида армян и армянских требований студентов и широкого круга читателей. В его семи разделах освещены политические, экономические и демографические последствия Геноцида армян, прояснены размеры потерь армян в разных сферах человеческой жизнедеятельности, очерчены пути преодоления последствий геноцида.

В частности, академик НАН РА **Ашот Мелконян** обстоятельно изучил процесс международного признания Геноцида армян и проблему компенсации как в научно-исторической, так и в международно-правовой и политологической плоскостях.

Другие авторы коллективного труда – академик НАН РА **Геворг Погосян** и к. и. н. **Гегам Бадалян**, провели исследование человеческих потерь, понесенных армянским народом, и демографических последствий геноцида.

Член-корреспондент НАН РА **Арарат Агасян** представил невосполнимые утраты армянских средневековых архитектурных памятников, иллюстрированных рукописных книг хранящихся в армянских монастырях и церквях, фресок, икон, барельефов, хачкаров и надгробных плит, ценностей прикладного искусства и светского изобразительного искусства вследствие гамидовских погромов и Мец егерна в Западной Армении и других регионах Османской империи, а также политики уничтожения армянского культурного наследия в Турецкой Республике.

Доктор архитектуры **Давит Кертменджян** изучил политику уничтожения армянских историко-архитектурных памятников в ходе Геноцида армян с точки зрения проблемы культурного геноцида и компенсации за ее последствия.

В рамках коллективного труда д. и. н. **Армен Марукян** исследовал имущественные и финансовые потери армянского народа вследствие геноцида и их последствия. Он также классифицировал и систематизированно представил раздел практических предложений по механизмам и инструментарию преодоления последствий Геноцида армян.

Геолог **Айк Мелик-Адамян** исследовал вопросы лишения коренного армянского народа возможности эксплуатации минерально-сырьевых ресурсов путем осуществления геноцида и его последствия, оценил степень экономической эффективности добычи этих ресурсов.

Востоковед **Ануш Ованнисян** исследовала процесс лишения армян имущества в Османской империи и его продолжение Турецкой Республикой, выявляя отрицательное влияние этого процесса на армян, оставшихся на территории Турции.

Юрист **Владимир Варданян** представил международно-правовые возможности привлечения турецкого государства к политической ответственности за Геноцид армян и пути преодоления последствий преступления геноцида.

Таким образом, коллективный труд «Потери армянского народа вследствие геноцида и методологические основы механизмов компенсации» не только отражает знания, накопленные в сфере арменоведения по исследованию Геноцида армян, но и может во многом способствовать разработке всеармянской повестки преодоления его последствий.